

ՏԱՃԱՐ

Ժողովրդասիր շաբաթաթերթ
Կրօնական, Ազգային, Գրական

ՏԵՕՐԷՆ-ԽՄԱԿԻՐ

ՋԱՐՄԱՆԵՐ ԲԱՆԱԿԱՆ ԿԵՂԵՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 3 ՅՈՒԼԻՍ 1910

ԹԻԻ 14

“ՏԱՃԱՐ”

ՄԱՅՄԱՆՆԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոստի համար սարեկան	35 դրու
Գաւառաց » »	40 »
Աւստահմանի համար սարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի սրակը	40 փարս

Բաժանորդութիւնները կանխիկ են

ՊԱՃԱՐԻ ՔԷ՛ Գործարանն է ՔԷ՛ Խաղաղական գործերուն համար պէտք է գլխիկ ու

Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեւիքաւ, Հայոց եկեղեցի,

درآمدند بشکلا شده ارمی کيسا شده داجار و غزته می مدبری باباس زارماير

Rev. Père Zarmair Guézurian Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏԱՅՐԱԳՐՈՒՄ ԱՐԱՆՆԵՐ ՇԵՄՈՒՆԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի, Շերեֆ փողոց, բիւ 33

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գաղէփքորեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Կունդ Ծ. Վրդ. Դուբեան
4. Տ. Կրէն Վրդ. Գաղէփքան
5. Տ. Հայեակ Բհնյ. Էքսէրճեան
6. Տ. Լիւթապէս Բհնյ. Հիւսարեան
7. Տ. Զայրմայր Բհնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Աւոնդ Ծ. Վրդ. Դուբեան
2. Տ. Հոսայեակ Բհնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բհնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բհնյ. Պաղքճեան
5. Տ. Պալաս Բհնյ. Պէյաղճեան
6. Տ. Խորէն Բհնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բհնյ. Անանեան
8. Տ. Դրիգոր Բհնյ. Զէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

« Տ Ա Ճ Ա Ր » ԿՐԾՆՊԹԵՐԹԻ

- ԱՂԻՐԻԱՆՈՒՊՈՂԻՄ. — Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
 ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գարեկեան
 ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պալաս Վրդ. Դարձեանեան
 ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պարեան
 ԱՅՈՒՅՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր Ա. Բհնյ. Տօնէլեան
 ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանտակեան Էֆ.
 ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բաղդէն Ծ. Վրդ. Կիւլէսէրեան
 ԴԱՀԻՐԷ. — Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւնուհի
 ԵՂԵՍԻԱ. — Բ. Թիւրաթեան Էֆ.
 ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքսեան
 ԵՐՁՆԿԱ. — Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտաճեան
 ԵՂԻՐԱԿԻԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Արտազէ Վրդ. Գալէնտէրեան
 ԶՄԻՒՌԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ. Սարգիսեան
 ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ. Գալուստեան
 ԽԱՐԲԵՐԴ. — Առաջն. Տեղապահ Տ. Դէորդ Ծ. Վրդ. Աղանեան
 ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սառաթեան
 ԿԻՐԱՍՈՆ. — Մախոս Էֆ. Թոքաթեան
 ԿԻՐՄԻԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ. Նշանեան
 ՀԱԼԷՊ. — Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գաապարեան
 ԼԱՆԶԷՍԹԸՐ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ա. Եպիսկ. Իսթիւճեան
 ԼԱՐԱՇ. — Տ. Հոսայեակ Բհնյ. Վարդապետեան
 ՄԱՐԶՈՒՆ. — Յակոբ Էֆ. Սրապեան
 ՆԻԿՄԻՐԻԱ. — Տ. Ռակի Բհնյ. Պիպիեան

- ՆՈՐ ԶՈՒՂԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բաղարատ Վրդ. Վարդապարեան
 Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ. Տառեան
 ՌԻՇԱՔ. — Կարապետ Էֆ. Քէշեան
 ՊԱՆՏՐԻՄԱ ՊԱԼԲԷՍԻՐ. — Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մաղլաճեան
 ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա. Եպիսկ. Կէօմրիւքեան
 ՊԱՅՐԱ. — Կարապետ Էֆ. Քէրթմէնեան
 ՊԱՐՏԻԶԱԿ. — Յովհաննէս Էֆ. Տ. Կառապետեան
 ՊԵՐՈՒԹ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Եղիշ Կիւլէ Վրդ.
 ՊՈՒՔՐԷՇ. — Դազմարտ Էֆ. Կանիկեան
 ՊՐՈՒՍԱ. — Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա. Եպիսկ. Արշարունի
 ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մարշնիկեան
 ՌՈՏՈՍԻՐ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բաթոլ Բհնյ. Թաքմեան
 ՍԱՄՍՈՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վրդ. Օտապաշեան
 ՍԵՐԱՍԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլ Բհնյ. Օտապաշեան
 ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բհնյ. Թուխմանեան
 ՍՕՅԻԱ. — Տ. Մեարտ Բհնյ. Տ. Մեարտեան
 ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմաքս Բհնյ. Տրէպեան
 ՏԷՏԷ ԱՂԱՃ. — Տ. Գարեգին Բհնյ. Տէօփիլեան
 ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ Էֆ. Մովսէսեան
 ՏԻՄԷԹՕԴԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան
 ՏՓՂԻԱ. — Հ. Առաքելին
 ՓԱՐԻՁ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառդապետ Բհնյ. Քիւպարեան
 ՔԷՍԹԷՆՃԷ. — Տ. Մատթէոս Բհնյ. Նշանեան
 ՔԷԻ. — Առաջն. Տեղապահ Տ. Պասկ Վրդ.
 ՅԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
 ՅՐԷՁՆՕ. Յակոբ Էֆ. Նշանեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

Կրօնական, Ազգային, Գրական

Ս. ՏԱՐԻ

ՇԱՔԱԹ, 3 ՅՈՒԼԻՍ 1910

ԹԻԻ 14

ԲՈՎԱՆԱՆՈՒԹԻՒՆ. — Վերանորոգութիւն Հայ Եկեղեցւոյ Կաթողիկոսականութեան... Անդրանիկ կոնդակ Ս. Պատրիարք Հօր (Երկրորդ և Վերջին մարտի)...

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՍԷ տիտեր զմղափար մ'ունենայինք թէ այն շինուածոյն յոր կը նայինք որդեանար են բոլոր հիմունք, և թէ քիչ ցունց սպառնում է կրթութեան...

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ, 1887 թուին

Ներազուց հանդիսի մէջ

Տաճարի Լ. թիւին մէջ կը հարցնենք (1) «Ինչ կերպով կարելի է սովաշն կրթութեան ժողովուրդը, իր հոգեւոր կրթութիւն մէջ...

(1) Մեկնակութի Տնօրէն Ներազուցին մէկ յօդաւածին...

Կ'ըսես թէ անհատապէս անկարող կ'ըլլանք կթէ որոշ և համոզիչ պատասխան մը տալու, վստահ ենք թէ նրա վարչական մը չպիտի ունենայինք Հայ Եկեղեցականներու ընդհանուր ժողովի մը մէջ:

Ձեր հարցումին պատասխանն ահա կուգամ փորձել նախաբանական յօդուածի մը մէջ, որ պիտի շարունակուի հետզհետէ և պիտի լրջայ անհատական ծրարքի ուրուագիծ մը:

Հայ Եկեղեցին վերանորոգել պէտք է այս է միակ ազգու և հիմնական դաժանութ որով Հայ ժողովուրդը պիտի դադրի ուժանալէ անկէ:

Անկողմ պարզութեամբ համար է մեզի կ'ըսէք, Եկեղեցիներուն մասին ահա ձեզի ներկայացուցած եւ Սրբազան Պատրիարք Հօր նշանաւոր հատուածը որմէն մէջ 23 տարի առաջ կը խօսի անկեղծ Հայ Եկեղեցիի չէնքին մէջ մտայնած օտար փորձերուն հիմն վիճակներուն վրայ, զորս հարկ է փոխել կ'ըսէ:

Հայ Եկեղեցին վերանորոգել պէտք է, և ամբողջական թնտեսական մը քովէն անցնել պէտք է բոլոր կանոնական, ծիսական, արարողական, բնակարան-մասերը, ստանց բացառ ուրիան: Անկեղծ ըլլալու

ենք նախ և առաջ մենք, ու ճշմարտութիւնը լման խօսելու ենք, առանց կասկածելու թէ կայ մեր վրայ մարդկային ո՞ր և իցէ հեղինակութիւն որ զմեզ պատժելու պիտի փութայ, երբ մենք մեր զողափարները կ'արտայայտենք(2)։ Եւ այն ատենը և միայն այն ատենն է որ կազմելիք վերանդիշ ժողովներ շինարար և արդիւնարար պիտի դառնայ հին Եկեղեցւոյն Ս. Ժողովներուն նման։

Վատիկանեան ժողովին մէջ, Մօնէնեօն Շիթրօզմայէր երբ կը խօսէր Պապին անսրբապետեան դէմ, Ս. Գիրք ի ձեռին, Պապական կղերի մեծամասնութիւնը կը սրուար երեսին։—Անաթեմա ուրացելոյն, և չէր հանդուրժեր որ ճշմարտութիւնը խօսուէր իրենց ներկայութեանը։

Ամենայն Հայոց Սրբազան Հայրապետին ազդուած իր հեղինակութեան մէջ, բժիշկ Բաբայեան վերջերս Եկեղեցիի կարգ մը արարողութիւններու և ծէսերու բարեփոխմունքը իբրեւ առողջապահական անյիշլի և սահմանափակ պահանջներ կը ներկայացընէր, և Նորին Ս. Օծութիւնը ի պատահան կը զրէր թէ «Կան բաներ որոնք այժմէն իսկ կարելի է բարեփոխել, իսկ կան ծանրակշիռ բաներ, որոնց համար մշտադիր եմ ազգային ընդհանրական Սիւնհոգոս մը գումարելով քննել»։ Տաճար իր 44րդ թիւով մատնանիչ կ'ընէր զույգ այս պարագան, երբ կը խօսէր թէ Սրբազան Հայրապետը համակիր է վերանորոգութեան խորքին։

Զիարդ և իցէ. սա՛ ճշմարտութիւն է թէ վեց դարեր են յորմէ հետէ, Եկեղեցին իր բարեկարգական ժողովները սարքէն են մնացած է, և հետեւապէս անհրաժեշտութիւն կար շատ շուտով սարքելու այդ կարգի ժողովը։

Տաճարիւ կնքածիքին մէջ ուրիշ դիտողութիւնն արժանաւոր կէտ մը կար, երբ կը յայտնէր թէ «Հայ եկեղեցականներու ընդհանուր ժողովի մը» այժմէն կուզանք յայտարարել, թէ որպէսզի գումարուելիք վերանորոգիչ ժողովը Հայանեմանայց առա-

քելական Ս. Եկեղեցիի ողջոյն համաձայն կազմուած ըլլայ՝ աշխարհական պատգամաւորներ ալ պէտք է անդամակցին անոր, ինչպէս կը տեսնենք հինգերորդ դարի պատմական ժողովին մէջ, և ինչպէս որ կը տեսնենք հայրապետութեան ընտրութեանց համար թուր զուգումուած ժողովներու մէջ։

Հայոց Եկեղեցին չէ ունեցած այն բոլոր քննադատելի ձեւերը, որոնք կ'երեւին բոլոր միւս Եկեղեցիներու մէջ։ Այո՛, անոր մէջ չէ կազմուած կղերական հօգի քաւք մը, որ հակասէր ժողովրդապետական կազմակերպութեամբ ունեցած իր կառավարութեան, և հետեւապէս անկարելի է որ համակիր պիտի հիմակ յայտնուած այն կարծիքին թէ Եկեղեցիի վերանորոգութեան հարցը պիտի վճռուի կամ կ'էտք է վճգուի եկեղեցականներէ բաղկացած Սիւնհոգոսով մը։

Եկեղեցին վերանորոգել պէտք է. վասն զի երեք հարիւր հազար երկաթափութիւններէ վերջը, ահա սկսած է չորրորդ երկաթափութիւնը, որ կ'սպառնայ քարուքանդ ընել Եկեղեցին իր հիմին ու վարդապետութեանցը մէջ իսկ։

Անդրանիկ երկաթափութիւնը Եզր կաթողիկոսի օրէն սկսած և ազգին շատ մը հատուածները կուշարուած է, և որուն հատուածները միայն կ'երեւին մեղի 10,000ի մօտ մնացած Հայ-օրթոդոքս (Հայ-հոռոմ) հանուածին մէջ, և որ մօտ է չիլանելու, թէեւ նոր փիլիսոփաներ ուղղութեան զանգուածէն չի դառուիր ինքն ու բղաւն, երբ Հայ մը իր մայրենի Եկեղեցիէն կ'ուժանայ։ Դաքիւրը վաւերացուցած են թէ Բիւզանդեան կայսրութեան ճշուամին ներքեւ օրթոդոքսացած Հայեր անդառնալիքէն կորան Հայութեան համար, և շատ հոծ հայաբնակ կեդրոններու չեղութեամբ տեղերու մէջ է որ հայ-օրթոդոքսներու ճիւղ մը կը քաշկոյրէ իր գոյութիւնը։

Երկրորդ երկաթափութիւնը սկսաւ կիլիկեան դարուն, ու Լամբրոնացիին օրերէն ըստեցաւ Ունիթիոս քարոզիչներու ազդեցութեան ներքեւ, և եւրոպական ազդերու մէջ ցրուած հայ գաղթականութիւններ՝ Նիկոյ Թորոսովիչներու տխուր գործունէութեան շնորհիւ Հայ Եկեղեցիէն ուժացած կաթողիկ

(2) Միւր լուսնիքներն յառաջիկային։

Հայեր՝ լեհացան, լատինացան և անդարձ կորսն Հայութեան համար, իսկ ուր որ Հայութեան հոծ զանգուածը կը պարուրէր Հայորդիները, մնացին անոնք ազգութեան ծոցին մէջ, և հիմակ կը ներկայացնեն թերեւ 100,000 թուով համայնք մը, իրենց ազգային կրօնական կազմակերպութիւնովը եւայլն:

Երրորդ երկրպագութիւնը ամերիկեան միաբնարութեան պարզուն է, որ այսօր 50,000 Հայ եղբայրներ անջատ վարչութեան մը ներքեւ կը կառավարէ, ու դեռ չէ անցած փորձութեան բովէ մը որուն մէջէն աննշխն քիչ անսասան զուրս կրնար գալ ու մնալ իբրեւ Հայ ազգութիւն:

Չորրորդ երկրպագութիւնը — քաղաքական կուսակցութեանց ձեւին ներքեւ — կը սկսի, կը ձգտի ամբողջ ազգային զանգուածը ուժացնել Եկեղեցիէն, Բրիտանիկութեան հիման հետ պայքարելով:

Ուստի շատ զեղեցիկ, շատ պատշաճ էք ձեռնարկը, որով Հայ Եկեղեցիէն հառուածեալ կաթոլիկ և բողոքական Եկեղեցիներու հետ համարաշխուռ կը ձեռնարկուի և հրապարակաւ կը փաստուի միաբանութեան զաղափարը:

Նախկին հայրապետը, Սրբազան Հայրիկը ո՞նէր իր նշանաւոր որոշումը, թէ Հայոց վարժարանները անխտիր ընդունուելու են Հայ բողոքական և Հայ կաթոլիկ մանուկները. և հիմակ ո՞րքան ուրախ եղանք, երբ Պատրիարքարանը կը հռչակէր թէ բողոքական եղբայրները կրնան Ուսումնական Խորհուրդներու անդամակցել:

Իցէ՛ թէ Հայ-օրթոտոքս մեր եղբայրներն ալ ունեցած ըլլային առանձինն ազգային-օրթոտոքս վարչութեան ձեւ մը, և Պատրիարքարանը փութար անոր հետ ալ մտերմանալ և յունացումի համբայ բռնած այդ փոքր մեր մէկ համայնքն ալ խաղաղ ազգազայնական հոսանքէն:

Բոլոր յարանդանական երկպառակութիւնքը հանող ազգայիններ և անոնց առաջնորդող օտար փրօփականութիւններ՝ տա հոտարակաց մեկնակէտը ունէին իրենց առաջնորդ թէ՛ «Հայոց Եկեղեցին վերանորոգութեան պէտք ունի»: Եւ այս սղա-

ղակը այնքա՛ն դարերու մէջ յեղեղուած ու այդ աղաղակին հետեւանքը այնքա՛ն տխուր իրողութիւններով լի եղած է, որ չա՛տ դժուար նոյն իսկ անկարելի՛ էր դնուծառ ատեններս համարձակիլ և ըսել թէ Հայ Եկեղեցին վերանորոգութեան կարօտ է, մանաւանդ ո՛ր և իցէ եկեղեցական երբայր յանդգնութիւնը գործէր, անոր կարգապահութիւնը գրեթէ սկիզբէն որոշուած էր: Որչափ կը յիշեմ ես առաջին անգամ Հայ Եկեղեցիին համար բեֆօրմ առաջարկող Հայր եղած է անմահանուն գործիչ Միքայէլ Նալբանդեան, իր «Երկու Մօռք» տնտեսով հռչակաւոր գրքոյկին մէջ: Իսկ վարդապետներու մէջէն Զիլինկիրեան Յակոբ վարդապետը, որուն «չնորհունակ» մակդիրը շատ ատեններ կարդացինք:

Որթօրօքս, Կաթոլիկ և Բողոքական բաժանումներէն անկախ Հայ Եկեղեցիի մէջէն և Հայ Եկեղեցիի ոգիին ու վարդապետութեանց նշանակեցի մը չափ չհակառակող վերանորոգութեան հարցին վրայ է որ Նալբանդեանէն ցայսօր զանազան հրապարակագիրներ, եկեղեցականներ խօսած ու կարծիք յայտնած են ցան ու ցիր իրենց հրատարակութեանց մէջ Սյր ամէն յայտնուած ու անտես առնուած կարծիքներուն ու առնուած մանր քայլերուն տառամասերով եւ տեղեւորութիւնով ու զեցի այս քանի մը տող գրուածքիս մէջ և կը յուսամ թէ չեմ սեղադրուիր:

Թող լռէ՛ մունչը՝ անդամալոյծը կամ որոց քաղցր է ցննածու լուծը:

Ասանկ կ'երգէր Բամառաշ Կաթիկոս իր մարտաշունչ մէկ հրաշալի դրօշագին մէջ, երբ խնդիր էր Հայուն քաղաքական պատիւը պաշտպանելը:

Ինծի համար ալ անդառնալի կիրթանումի մը թաւալգլոր, երեւոյթին հանդիսատես ըլլալ է, եթէ օր առաջ և ժամ առաջ չխօսինք և չկանխենք մեր Եկեղեցիի դէմ սկսուած ընդարձակ, հիմնաւոր և շայնատարած շարժումին դէմ՝ մեր սխիթեմաթիք գործունէութիւնը:

Պէտք է վերանորոգենք Հայոց Եկե-

ղեցին, դարուս ոգւոյն և Հայոց առա-
ջելական եկեղեցիին նախնի սրբազու գեհ
սկզբունքներն հիման վրայ, որպէսզի
թշնամին յաղթահարենք: Այո՛, պէտք է
ժողովրդական սկզբունքներու կառ չած
մեր պատուական եկեղեցիին թագուն
դեղեցկութիւններն երեսն հանենք իր
յովանդակ ըրծելեանը մէջ. և կը հաւա-
տամ թէ Բողոքական հատուածը ինքնին
կտ պիտի առնէ իր բողոքը և պիտի գայ
արձանագրութիւն մեր եկեղեցիին տօնոր-
ներուն մէջը:

Այո՛, երբ մեր եկեղեցին թօթափէ իր
կազմին ու ձէսին մէջ սարգած օտար
քարերը իր վրայէն թերեւս աւերելով
կերպով Վրոյն քանոնաւորութեան
ու Վաթնիկէն արարներ յովարձին թէ
իրենց ու մեր մէջ թափանցած աւելի
խորանկցած պիտի չընայ. ապա ինչ
կարծեմ թէ ընդհարմաւին աւելի զե-
ղեցիկ պիտի ելլանայ յայնմ եկեղեցին
և աւելի փրկի ու պիտի մտրը որ դե-
րենք ծնած է. Իսկ այն նոր բովանդակ
որակ պատանայ տաղաւթը կրօնի փոխ, ան-
դէն և անդ պիտի կապի վանդի սրտի
տեսնէ թէ Հայ եկեղեցիի պաշտօնական
պատկան կերպով չի նմանիր եւրոպա՝ ան
կղերական էակին և պիտի ոտնադնէ
դադրեցնել հակակրօն ըսած պայքարը
պիտի պատկառի հանրօգուտ ու հոկայ
մեր աշխատանքին առջեւ և թերեւս ինք
պիտի գգած զի և ուրախ ըլլայ,
տեսնելով թէ Հայ եկեղեցին այն փոխ
գործուն է որ հայ ժողովրդի մասուր,
տնտեսական և բարոյական վերածնունդի
իջկնդ փոխադրած խոչ ալին յարողանալու
տիկ ախոյեանն է:

Ահա թէ ինչպէս կ'ըսեմ եմ:

Պէտք է վերանորոգել Հայոց եկեղեցին:
Թէ Կ'ընենք կ'ընենք մեր վերանո-
րութեան հարցը թէ համալրողային ժողո-
վո գումարանովը, մէկ քիչ ամէն կրնայ
և պէտք է բաժնի մայր հարցը, այդ մա-
սին տարակարծիք եմ. Ի՞նչ համալրում է
թէ պէտք է գումարու համալրողին
ժողովը, և զկրկնէ վերանորոգու-
թեան հարցը:

Յառաջդիմութեան օրէնքին հակասել է
կարծել թէ արդի դարուն ժողովը կրնայ
սահմանադրել վաղի դարերուն համար ալ
բաւող օրէնքներ ու կարգադրութիւններ:
մինակ կրնանք հռչակել թէ կէս դար
մէկ դարն անգամ էր քիչ քանակաւ
քննութեան լուրն անցուցու ինչ եկեղե-
ցիին բնոր կարգ ու սարքերը:

Բանաձեւելով մեր յօդուածի այս յա-
ռաջարկը կ'ըսեմ:

Եկեղեցիով որ ազգին միահամուռ բող-
ձանքն է զօրացնել Հայ եկեղեցին, և ու-
ծացած ժողովուրդը եռանդաւորել, ու
ստիկա հնար է քննել եկեղեցիի կարգ ու
սարքը հին առաքելական դարաւորութեան
միջոցներով ու դարիս ոգւոյն պահանջ-
մանց համաձայնեցնելով պէտք է դու-
մարուի Ս. Էջմիածին ընդ նախագահու-
թեամբ Ամենայն Հայոց Հայրապետին ազ-
գային այն Համադրութեան հոգի Սինդո-
ղոսներէն մին, որ ձեռնհաս պիտի ըլլար
մերարնել Հայ եկեղեցիի բոլոր կանոնե-
րը, ձէսերը և կարգադրութիւնները, և
վճար պէտք եղած բարեփոխութիւնները
և այդ ժողովը պէտք է կազմուած ըլլար
Հայ ժողովուրդի ամեն գտներէն բնորոշ
պատգամաւորներէ, անհեղին անման
Օրթոթոքս կամ Կոնստիտի Սինդոլոսներով
որոնց մէջ մինակ կրնանք գտնել ներ-
կայ կ'ըլլայ իր կրօնքին պահպանող, հա-
մարտու իշխող տարրը:

ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՍԼԱՆԵԱՆ
(Եւրոպայի)

ՏԱՃԱՐԻ Ա. ԹԻՒՆ

Տանաթի տաճարին թիւը (նոյն 45) շու-
րորդիկ տպուած ըլլալով, կը խնդրի
գումարի և արտատպանի այն գործնորդ-
ներէն որ յատկաւ թիւերուն, փութով
վերադարձնել մեզ մասնաւորապէս հոգի Ա.
Թիւրքի գահագում աղբակու համար նոր
թափառողաւոր տպերու խնդրանքին:

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿ Ա. ՊԱՏՐԻԱՐԺ ՀՕՐ

Ա.

Օսմանեան խորհրդարանը՝ զոր կը ներկայացնէ համընդհանուր Օսմանեան ժողովուրդները՝ քննարկելով զինուորական տարրերը պարտք դրած ամէն քաղաքացիի՝ որ կը գտնուի զինուորական տանքիքի և պաշտանեկրուն մէջ՝ զինուոր գրուել հայրենիքին, և զինուորական մարզանքի մէջ կրթուելէ յետոյ՝ զէն ի ձեռին ծառայել անոր ի հարկին։ Զինուորական ծառայութիւնը քաղաքացիին ազնայնագործութիւնն ու փառքն է։ Զորյոյ վրէժնալից ասպարհութիւնը ընդհանուր հայրենիքին, որուն պէտք է նուիրուիլով որ կը զինուորի միանգամ, և ի թէ քորդելից կամ օրինական պատճառ մը չունի՝ հորկ է որ յօժարութեամբ յանձն առնուի հանդիմանել զինուորական պարտքը։ Գուցէ՝ ո՛չ այնչափ զինուորութիւնն որչափ զօրանոցի կեանքն ըլլայ դժուարեւորութիւն թերի փոխադրել որոնք դորմանումը կը կորստին զինուորական բարձրագոյն հիմնականութեան հսկողութեան շնորհիւ։ Իրաւ է որ ընտանեկան յարկի մը հնչող դիրտ թիւնները ձիւն չեն մարսել զօրանոցի մը խառնաճանճ զրուսթեան, բայց չենք կարծեր որ նիւթական մաքրութեան և բարեյական հոգածութեան կարեւոր պայմանները չյարգուին հոն, վառնդի վերջապէս կարելի չէ շիտթել զօրանոցը զնստանի մը հետ։ Յոյս ունինք նաեւ որ բանակի մէջ ծառայող քրիստոնէայ ազգերու համար կրօնական ազատութեան և սովորութեանց մասին խոստացումած անհրաժեշտ յանձնառութիւնները պիտի գործադրուին ընդհուպ, և զօրանոցին մէջ ալ՝ որ մը՝ իրենց զարդի մը մէջ՝ հաճոյական ու մարտը միմեկորտ մը պիտի կրնայ չնչել ամէն զինուոր։ Հայ զինուորը սակայն՝ որ պետութեան բանակին

մէջ կը ծառայէ՝ պէտք ունի չմոռնալով թէ ինքը զաւակն է նաեւ հայ զինուորեալ Նիկիոյցիին որու կ'անդամակցի, և պարտաւոր է պատիւ բերել Հայ-Քրիստոնէայ անունին՝ զոր կը կրէ։

Օսմանեան Սահմանադրութեան պնդումով՝ մեր հայրենիքին սպառնալուած բոլոր բարեքները աւելորդ է թուել մի առ մի։ Տարակոյս չկայ թէ երկրի վիճակը պիտի բարեփոխուի տակաւ. վաճառահաւթեան՝ արուեստներու յառաջացման՝ կրթական հաստատութեանց՝ երկրաշարժական արդիւնաբերութեանց՝ յարաբերութեան դիւրութեանց և վերջապէս ամէն կողմ ծնւոր առնուած արդարութեան և անցքորութեան միջոցներու ընդհանրացման շնորհիւ, և ա՛յլպէս՝ կարելի պիտի ըլլայ բոլոր Օսմանցի տարրերուն համար՝ հայթայթել աշխատանքի առատ արդիւնքն ու արջար վայելքը, զերծ պահելով զանոնք անգործութեան ու չքաւորութեան պղծութենէն, սովորութեան յայտնի չարքներէն, հալածանքներէ, զրկանքներէ, չեղային թշնամութիւններէ և այն անստոյգ և անհամար զիստ վիճակէն՝ որուն ենթարկեց զմեզ բռնապետական հին զրուսթիւնը, և ստեղծեց մեր մէջ տարադէմ դաշմանականութեան այն հոսանքները՝ որոնցմէ տարուեցան հաղարարները՝ թողլով իրենց հայրենիքը, կան տունն ու տեղը, և չատեր այ իրենց ընտանիքին օրապահիկը ծարելու հարկէն մղուած՝ ինկան օտար տղաքներու ա՛յլ կամ այն անկիւնները, և այսօր՝ մոռցաւ կին ու զաւակ՝ կ'փնտնան բարձրագոյն և նիւթապէս, Օսմանեան Սահմանադրութեան աւտաւոր հսկելու մը փութաշուրջ գաղթող Հայ ընտանիքներու գունդազգելը՝ դարձրելով իրենց ընտանիքը, ուր թէ և չկն կրցած տակաւին վերահաստատուել իրենց օճախներուն և իրաւունքին մէջ, սակայն

բարեխնամ Կառավարութիւնը՝ պիտի լսէ անշուշտ իր անժառանգուած զփրաղ զաւակներուն արդար բողոքը։ Իսկ անոնք՝ որ մենաւոր պանդխտութեան գոտեւորութիւնը ճաշակելին ու կը ճաշակին դեռ՝ ինչո՞ւ արդեօք չեն դառնար հոն, ուր լայող աչքեր ու սգացող սիրտեր՝ կարօտի անձկութեամբ լցուած կ'սպասեն իրենց։ Պարտք կ'զենենք մեր Եկեղեցւոյ լուսնակ պաշտօնէութեան վրայ՝ յորդորել այնպիսիները որ անյապաղ վերադառնան իրենց հոգեհատրներուն մօտ, որոնց հետ երջանիկ ապրելու յոյսը չէ որ պիտի պակսէր այսուհետեւ այն հողին վրայ՝ ուր Սահմանադրական օրէնքը սկսած է տարածել իր քարերար ազդեցութիւնը՝ յանուն իրաւանց և արդարութեան։

Օսմանեան պատուական Հայրենիքը աղիտաւոր արկածներու և ահաւոր կասկածներու ենթարկող բռնապետութիւնը՝ ակամայ զաղթականութեան չարիքէն զատ՝ իրենց տեղերը Յնացողներուն համար ալ՝ ինչ որ հասկանալի է ինքնին՝ կը պատարաստէր անկեաց կենցաղի ու չքաւորութեան չարիքը։ Կեանքի, ինչքի ու պատիւի դաւադրութեամբ պարսպոզներու մերթ անպատասխանատու և մերթ անպատիւ ընթացքը ուրիշ արդիւնք չէ՛ր կրնար յատալ բերել՝ բայց եթէ տնտեսական և ընկերային անկածութիւն մը, որ օգնութեան աղաղակներով միայն կը հեծկլտայ դեռ մեզ ականջին։ Երբե՞ն իր հացին առատութեամբ իր դրացիները անխորտակ ասպնջականող ժողովուրդ մը՝ այսօր յանուն ողորմութեան տրուած պատառի մը կարօտ՝ ձեռք կարկատելու զփրախտութեան դատապարտուած է, աւա՞ղ, Միտք բերելով այս ցաւազին կացութիւնը՝ ուր տակաւին կը գոնուի բնագաւառի հայը մեծ մասամբ, չենք կրնար չյիշել՝ երախտապարտ զգացումներով՝ ճշմարիտ նշխարութեան այն գրաւականները՝ զորս ցոյց տուին Կ. Պոլսի և մերձակայ գաւառներու ազգայինները մեր Ռուսահայ արեւակիցները՝ ինչպէս նաեւ Եգիպտական՝ Եւրոպեան և Ամերիկեան հայ գաղութները, և այն բարեւէր ծաղիկները, որոնք մէկէ

աւելի անգամներով փութացուցած են իրենց նիւթական օժանդակութիւնները, սիրովելու համար սովատանջ ժողովուրդ մը։ Բայց այսօրինակ նպատակներով կարելի էր լոկ ընձուել ժամանակաւոր դարման մը միայն, որ չէր կրնար անշուշտ իրերորդ վիճակը փոխել ի լաւն, քանի որ մարդաւերական այդ օգնութիւնները՝ մատուցման սովորական ձեւին տակ՝ շատ անգամ քուջաղեանք կը դառնայ մութացկանութեան ընտելանալու և երբ որոշ աշխատանքի մը հնարաւորութիւնը չ'ստեղծուիր տեղւոյն վրայ, և հետեւաբար անգործ մնալու պատճառներ և երբեմն ալ պատճառանքներ իրենց տխուր ազդեցութիւնը կը մշանջեանաւորեն։ Այս ստղտանքէն ազատ են անշուշտ անոնք՝ որ աղքատ հիւանդներ են՝ որքեր կամ ստոյգ այրիներ ու կամ անկարող ծերեր, և Ազգը կը ինամէ զանոնք հանրաձային դուքի և հոգածութեան ազնուական հարկը պահանջող մարդասիրական հաստատութեանց մէջ՝ որոնց ոչ ոք կրնայ ուրանալ բարոյական արժէքն ու կարեւորութիւնը։ Բռնապետութիւնը անտարբերութեամբ կը դիտէր իր իսկ ձեռքովը չարագործած այդ չքաւորութիւնը, մինչև որ կարելի եղաւ զգալ, և այն անշուշտ Օսմանեան Սահմանադրութեան շնորհիւ՝ թէ Հայրենիքի մարմինն առողջ անդամներուն միոյն ծիւրումովը՝ ամբողջ մանրմինն էր որ կը վտանգուէր ամենայայտնի ճշմարտութիւն, որուն արեւնոտ լուսարանութիւնը եղաւ խեղճ Ատանան։ Սահմանադրական Կառավարութիւնը այս վերջին անակնկալ աղէտքի ծնուցած թշուառութիւնը դարմանելու փոյթն ունեցած չափով մը, դրամական օգնութիւն մը մատուցանելով անթիւ ու անդամաթիւ ընտանիքներու, որքերու և այրիներու, և բացառիկ զիւրութիւններ ընծայելով վաճառական և երկրագործ դասակարգին։ Սակայն ասիական գաւառներու համար՝ ուր հողի մշակութեամբ միայն կարելի է ապահովել մէկ ու կէս միլիոնի չափ հայ երկրագործներուն կեանքն ու բարօրութիւնը, անիրաւ յափշտակութիւններու երեսէն երեսան եկած է այսօր հողային հարց մը, Այդ

խորթին հարցի հեղինակորէն լուծուած՝ ինչպէս վերեւ ակնարկեցինք՝ կ'ակնկալենք Սահմանադրական կառավարութեան, որ զիտակից և զօրեղ մտադրութեան առարկայ ըրած է աշխատասէր՝ արդիւնարար և տոկուն տարրին իրաւագործի վիճակը և լրջօրէն պիտի փութացնէ անոր լաւացումը, որպէզ զի անոնք որ արցունքներով կը ցանկնէ՝ հեձկն յեծութեամբ, և անոնք որ լաւով կը տանէին իրենց ակրմանը, ուրախեցանք ըստ իրենց իրենց սրաները» (Սաղմ. ձիւ. 5. 6.) երջանկութեան կային վրայ։

Երբ Օսմանեան Սահմանադրութեան այդ քաղցր ու բարերար հովանաւորութիւնը տիրուի ամէն կողմ, և եղբայրութեան ու հաւասարութեան ոգին տիրապետէ բոլոր դրացի տարրերուն, իւրաքանչիւր Հայու համար կրկնակի սուրբ կ'ըլլայ Հայրենիքին հողը՝ ուր իր օճախը կը մնայ կանգուն, և եթէ քանկո՞ւած իսկ ըլլայ այն, խանդաւառանքով մը կը փութայ շինել զայն, և աշխատանքի ազատ շունչովը ոգևորուած Օսմանեան քաղաքացիի մը պատիւով, ու վայելչութեամբ կ'սկսի սպրի՛ւ և Գէթնայի ստրկաբար իռնաթիւնով անոնք կ'սկսին աշխատելու կամքին։ Ուստի անհրաժեշտ կը նկատենք մեր ուշադրութիւնը դարձնել նաեւ ներքին գաւառներու աղաքնակ գիւղերու մէջ մուրաւ ու մուգուած ցիրուցան հայ ընտանիքներու վրայ՝ որոնք հին աւատականութեան ճնշող զանդանաւանդին տակ կը ծառայեն հողատէրեր ու զրկուածներ, զորոնք զուրկ ըլլալով նաեւ հողերու այցելութենէ, և տոհմային ներշնչումներէ՝ կը մոռնան իրենց լեզուն և կրօնական պարտականութիւնները։ Ազգին սմբողջութեան խլուած այդ եղկելի ընկորները կը բռնադատուին կորսնցնելու իրենց ինքնութիւնն ու խզի ազատութիւնը միանգամայն։ Եկեղեցական պաշտօնականներու պարտքն է յորդորել և հրաւիրել զիրենք զաւրճականից իրենց արեւակից եղբայրներուն հետ, որպէսզի հաւատքի և կրթութեան լոյսէն հաւասարապէս օգտուին եկեղեցիով և դպրոցով, և Օսմանեան Սահմանադրութեան շնորհիւ կարող ըլլան զգալու թէ ինչ օրհնութեան պրծանացած

է իրենց կեանքը։ Թերեւս նոյնքան նիւթ թական զոհողութիւն՝ ո՛րքան բարոյական ազդեցութիւն՝ հարկ ըլլայ ի գործ դնել այդ ցրուած մասերը յարմարաւոր տեղեր ամփոփելու համար։ Սակայն որ և է զանցաւորութիւն այս մասին՝ դատաւարութիւն պիտի նկատուի և Պարթիաքարանն ալ իր կողմէն պիտի փութայ կարեւոր իրազործել տալ Բարեխնամ կառավարութեան միջոցաւ։

Եղբայրներ, ահա մխիթարութեան քանի մը խօսքերս՝ որոնցմով ո՛չ մեր բարձր վերքերը և ո՛չ ալ անոնց դարձանները մատնանաւ եմ, այլ ապաւնի յոյսեր տալու մը զոհունակ սոսորոթեամբ կը գրեմ ձեզի, վասն զի եղ եւ մեզ Աստուած հոգի վնասութեան ալ զօրութեան, կը յուսամ թէ հանութեամբ կ'անկնդրէք այդ խօսքերուն՝ որոնք համօրէն ազգին համար անհատական կամ հաւաքական պարտականութեանց ազատ ուղեգիծն ըլլալու ծառայեն թերեւ, եթէ կը տիրենք մեր Ազգն ու Եկեղեցին, մեր ընտանեկան՝ կրթական՝ և բարեօրակական հաստատութիւններն ու յարկերը, եթէ կը յարգենք մեր բարոյական իշխանութիւնը երաշխաւորող Օրէնքը, ու մեր քաղաքացիական առաքինութիւնները, եթէ կը հաւատանք Օսմանեան Սահմանադրութեան իւրաքանչիւր ապագային՝ որ փրկագործութիւնն է հայրենիքին և եթէ զուժ ունինք մանաւանդ մեր զաւառաճի իրաւագործի՝ անգործ՝ անգոյս ու աղքատ եղբայրներուն վրայ, Երբ միեւնոյն դրօշակի տակ ամփոփուելու գէտքը կը շնչենք, մեր միակ նպատակը պէտք է ըլլայ անհրաժեշտ միաբան սիրով բոլորուիլ մեզի համար նուիրական համարուած պաշտօններուն շուրջ, պաշտպանելու համար արիմաբար ինչ որ մի՛րն է և կ'ապահովէ մեր ազգային-եկեղեցական — գոյութիւնը, աշխուժով և անկեղծօրէն գործակցինք իրարու։ Հմուտանք մեր արեւան գինն ու հաւրազատութիւնը, և զայն անաղարտ պահելու պատասխանատուութիւնը ո՛չ մէկ գործունէութեան՝ ըլլալ անտեսական՝ ըլլալ կրթական կամ քաղաքական՝ չկրնալ ընձեռել մեզի լաւագոյն անդորրութիւնը և

փոխաբանած յաջողութիւնը, եթէ չզիտ-
նանք համերայտութեամբ ներդաշնակաւ ու-
րիշ մեր սեպական գորութիւնը, որ
միութեամբ միայն կ'արգաստորուի, ու
մեզի կը չնորհէ հայրենակից ժողովուրդ-
ներու կողմէն մէջ չինարար, կիրթ ու
բաներու հազար մը առաւելութիւնը: Հա-
կանակ պարտաւորին՝ երբ տեղի տանք ան-
միտ երկպառակութեանց և անհաճոյ ընդ
հարումներու՝ որոնք սաստկապէս կը պն-
դին ու կ'ապաւնեն մեր բովանդակ ուժերը,
կ'եզոտի մեր Հայեցի նկարագիրը, կը
մղտնադրեն մեր օրինաւոր շահերը, և վեր-
ջապէս անողորմարար Գր լոկստուն արդէն
կնի կ'արագած մեր մարմինն բոլոր ան-
դամները:

Եւ ո՞վ այն շատնէ, ձեռնած սիրտով
չտրտուիք գոռնապէս յիշեցնել Առաքեա-
կային ծանրացումը՝ սա տողերը՝ «Եղբայր-
ներ, ազատութեան կանչուած էք զուր-
ք և պէտք չէ որ այդ ազատութիւնը մար-
մինով ապրելով պատճառանք մը բլրայ ձե-
զի, այլ սիրով ծառայեցէք իրարու... իսկ
եթէ խոճատէք և ուտէք զիրար, զգոյշ
եղէք, զգոյշ ջնջէք զիրար» (Գաղ. Ե.
13-15): Քաւ լիցի, որ անմիաբանութեան
պժնական և բանձնադատիկ փորձերէն ան-
ցած ու շտակաւին չզգաւտուցած թող
տանք որ վերջին «հանձնը» Հիւսիմակունաց
վեհապետին հանդիսացող Հայ ժողովուրդը
ստիպուի վերջին անգամ մ'ալ արթնցնել
իր մէջ հին ու սքանչելի ողբերու արձա-
ղանգը. փորձողականի փնտռն ու հովիւի
անձնութիւնը արհամարհելու տխուր
հեղեղանքէն պզտուեալ:

Զօրեղապէս և անբաժան ուրեմն ընդ-
զրկած զիրար՝ չիողունք որ մեր խնա-
տուններն անմտանքն չկրնայ ըմբռնելու
չափազայնաբարիտ փիլիսոփայական և գաղա-
զայեցնական լուրջութիւնը:

Զիջողունք որ թիւրքմանայ լարեղարդու-
թիւնը մեր Եկեղեցւոյն՝ հալածու ու ծոյլ
վիճակաւորներու, անձնաւոր՝ և անախճ
կրօնաւորներու, լուրջ և անպարտաճա-
նաչ հովիւներու երեսէն:

Զիջողունք որ սէրը ցամքի ու անկար-
գութիւնը արմատաւոր ընտանիքներու մէջ,

անսուրբ ու անշնորհ ամուսիններու և
ծնողքը անարգող ամբարտաւան գաւակնե-
րու երեսէն:

Զիջողունք որ մեր զարդները անբա-
նան իրենց արուեստին անցիտակ ուսու-
ցիչներու և ուսանելու անփոյթ ու կանո-
նազանց աշակերտներու երեսէն:

Զիջողունք որ Օսմանեան Սահմանա-
դրութիւնը անտեքուի բուռն ու անխրա-
մեծամեծներէ, և ողբին օրէնքն ալ տոնե-
կոյս ըրէաք մէս զնարար ժողովրդական-
ներու երեսէն:

Զիջողունք որ զինուորութեան պատիւն
անարգուի մէր մէջ դասալիք ատորու-
թեամբ, որ ընդդէմէ քաղաքացիական
առաքինութեան:

Այլի առջեւ ունենանք Օսմանեան
Սահմանադրական կառավարութեան մա-
տուցանելիք մեծամեծ ծառայութիւնները,
և օգտուինք անոնցմէ:

Չմոռնանք անհող՝ անգործ ու աղքատ
և առհասարակ հոգածութեան արժանի
մեր զաւառացի եղբայրները թէ բլրան
իրենց բնակայրին մէջ և թէ օգար եր-
կինքի առկա:

Այս ու ճշգրիտ սուրբ պարտականու-
թեանց հանդէպ զօտեպնուած՝ կանխեմք
սպաստանիք աստուածային նախախնամու-
թեան, ինչդրելով որ յաջողէ մեր և մեր
բոլոր եղբայրներուն՝ ինչ որ բարի է և
օգտակար:

Մտղթենք ի բոլոր սրտէ որ Իր անհոն
ողորմութեամբը հաստատուն և զօրաւոր
ընէ բովանդակ Օսմանեան Հայրենիքը և
Օսմանեան Սահմանադրական կառավարու-
թիւնը:

Անձթենք նաեւ որ մեր Հայրերուն
Աստուծոյն պատէ Հայոց Ազգն ու Եկեղեցին,

«Այսուհետեւ՝ Լոյսարք, ողջ լերուք,
հատաւտուն կայէք, միւլաբնեցարուք,
միաբան լերուք, խաղաղութիւն արարէք,
և Աստուած խաղաղութեան և սիրոյ կղի-
ցի ընդ ձեզ: Ողջին տուք միմեանց ի
համբոյր Սրբութեան... Ենորհք Տեսան
մերոյ Յիսուայ Քրիստոսի և Մէրն
Աստուծոյ և Հաղորդութեան Հոգւոյն

Սրբոյ բնդ ձեզ ամենայն (Բ. Կորնթ. ԺԳ. 11—13) Ամէն:

Տուաւ կոնգրակս ի Պատրիարքարանէ Հայոց Կ. Պոլսոյ, ի 24 ամսեանց Մայիսի 1910 ամի Շնորհաց, յառաջնում աւուր Յիսնու-մեակի Ազգային Սահմանադրութիւն, եւ ի քուիս Հայոց ՌԵԾԹ ի ԻԲ Մարտի

Պատրիարք Կ. Պոլսոյ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ

ՕՏԱՐ ԷՋԵՐ

ԱՆՄՍՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Անտեսանելիս հաստատել՝ փաստի վրայ հաստատուած կարծիք մը չէ, միայն մէկ ունակութիւնն է՝ անտեսանելի բաները զիտելու ունակութիւնը, որովհետեւ ան-տեսանելի բաները անմահ են:

Երկու աշխարհներու մէջ կ'ապրինք, աշխարհ մը քոր կրնանք տեսնել, լսել և շօշափել, և աշխարհ մը որ անտեսանելի, անլսելի և անշօշափելի է: Անտեսանելի աշխարհն է կարեւոր աշխարհը, իրական աշխարհը, տեսական աշխարհը:

Անտեսանելին կը կազմէ բնականին յարկը. այդ յարկը քարով, աղիւսով կամ փայտով չէ շինուած, այլ այն հաստատով, յուսով և սիրով որ իրարու կը կապէ այբը և կինը, ծնողքը և զաւակները, Շնական իմաստասէրը զի ծիծաղի խրճիթի մը մէջ եղած սիրոյն վրայ: Բայց խրճիթի մը մէջ սէրը տունը կը կազմէ, ինչ որ ատեւ լուծիւնը պաշտօնի մը մէջ կրթէք չի կրնար բնել:

Անտեսանելին կը կազմէ զպրոցը: Քիմիական աշխատանոցներ, մատենադա-րաններ, ննջարաններ, ճաշարաններ զպրոց մը չեն կազմեր: Միլիոնատէր մը երբէք զպրոց մը չի կրնար շինել: Աշխարհի ամե-նէն մեծ զպրոցներէն մին, որուն աղղե-ցութիւնը դարեր տեսած է, ոչ աշխատա-նոց էր, ոչ մատենադարան և ոչ ալ ննջա-րան: Աթէնքի պուրակին մէջ գտնուող

զպրոցն էր անուր Պլատոն կ'ուսուցանէր:

Անտեսանելին կը կազմէ ազգը: Ազգը մեծ չլլար, ազգը հարուստ չլլար երբէք հանքերով, անտեսանելով, մարգարտին-ներով և ջրվէժներով: Ասոնք բոլորը գո-յութիւն ունէին Ամերիկայի մէջ չորս դար առաջ, և Ամերիկա մեծ ազգ մը չէր:

Մեծ մարդիկը մեծ կ'ընեն ազգ մը, և այն յատկութիւնները որոնք մարդիկը կը մեծցնեն, անտեսանելի են: Անոնց արդիւնք-ները կը տեսնենք, բայց յատկութիւնները չենք տեսներ:

Անտեսանելին կարելի կ'ընէ ատեւորա-կան յաշտութիւնը: Որովհետեւ ատեւորա-կան, յաշտութիւնը վարկի վրայ հաստատ-ուած է, և վարկը՝ մեր նմաններուն պար-կեղտութեան վրայ հաւատք ունենալն է. և պարկեղտութիւնը անտեսանելի է: Ոչ ձեւ ունի, ոչ գոյն, ոչ հոտ, ոչ ալ ձայն: Չենք կրնար տեսնել զայն, ոչ ալ լսել կամ հո-տոտել, և ոչ ալ շօշափել: Այսօր՝ պետական բանտին մէջ իրենց վիճակած բանտարկու-թեան պայմանաժամները լրացնող քնարդիկ կան, որոնք քանի մը ամիսներ առաջ եր-կաթուղի մը, դրամատուն մը կամ գործա-րան մը ունէին, որոնք շահագործուած դրամ ունէին, պաշտօնականը՝ իրենց տրա-մալրութեան տակ, իրենց ձեռնոտը բարե-կամներ, կորով, ձեռնհասութիւն և կեւմը-տական ճարպիկութիւն ունեցող մարդիկա-որոնց քով պարկեղտութիւնը կը պարտէր սակայն: Եւ այդ անտեսանելի պարկեղ-տութեան պակասին պտոճատաւ սնանկ են նաեւ ստացուածքի, համբաւի և նկարա-զրի մէջ:

Հակամէտ ենք խորհելու թէ իրականը նիւթականն է, և աննիւթականը անիրա-կանն է: Բայց այդ ճշմարիտ չէ: Անտը հակառակը ճշմարիտ է: Անտեսանելին իրա-կանն է. տեսանելիին միակ արժէքը այն է որ անտեսանելին գործիքը կամ խորհրդա-նշանն է:

Դպրոցական տղան սա թուանշանները կը գրէ իր քարէտախտակին վրայ, $2+2=4$ և կ'ըսէ, երկու երկու ալ կ'ընէ չորս: Բայց այն երկու և երկու զոր քա-րէտախտակին վրայ գրած է, չեն կազմեր

այն չորսը զոր գրած է քարէտախտակին վրայ: Որովհետեւ երկու Չներն ալ հոն են անփոփոխ: ինչպէս նաեւ չորսը: Չորսը հազմող երկունները իր ոչնտուն մէջը, անտեսանելի են: Քարէտախտակին վրայի թուանշանները իրականութիւնները չեն, իրականութիւնները մեկնող խորհրդանշաններն են միայն: իրականութիւնները անտեսանելի են:

Նուազախումբը չի կազմեր երաժշտութիւնը: Երաժշտութիւնը մէկ հոգիէն ուրիշ հոգիներու փոխանցող միջոց մըն է ան միայն: Ինչպէս որ հեռադրական թելը չի կազմեր իրեն փոխադրած լուրը, այնպէս ալ նուազախումբը երաժշտութիւնը չի կազմեր: Երաժշտութիւնը ձայնի տարածութիւն մը չէ: տպաւորութիւն մըն է զոր ձայնը մէկ հոգիէն միւսը կը փոխադրէ: Երգահանը իր մէջը կը ստեղծէ համայնաւոր: Այս ստեղծագործութիւնը խորհրդանշանական լեզուաւ մը թուղթի թերթի մը վրայ կը թարգմանէ: Նուազախումբը այս թարգմանութիւնը ձայներու կը վերածէ: Այս ձայները ականջէն ընդունուելով ունկրողը ինչ մէջ բուն երգահանին հոգիին մէջինին նման տպաւորութիւն մը կ'արթնցնեն:

«Լաւ նկատէ երաժշտական ստեղծաշարին իւրաքանչիւր մասերը ոչինչ են ինքնին:

Երաժշտութիւնը ամենուրեք է աշխարհի մէջ — բարձր, մեղմ, և անաւամէն բան կ'արտայայտուի:

Տուր ինձի ձայները որ գործածեմ: Ձանտնք կը խառնեմ մարիս մէջ:

Եւ անաւ, լսեցիք դուք և տեսաք նկատեցիք և զուխնիդ խոնարհեցուցէք:»

Ունկնդիրը ի՞նչ լսեց, ի՞նչ տեսաւ: Երգահանին հոգիին մէջ գտնուող անտեսանելի և անլսելի զգացողութիւնը լսեց և տեսաւ:

Մոնտենաղարան մը գրականութիւն չէ: Խորհրդանշաններու շարք մըն է միայն, որոնց միջոցաւ գրականութիւնը, որ անտեսանելի կեանք մըն է, հեղինակէն ընթերցողին կ'անցնի: Երբ Մարգէյ ինքնիւրենը կը կրկնէր «Վենետիկի Վաճառականին» չորրորդ արարուածը, զոր զոյց սորված էր, գրականութիւնը կը վայելէր թէեւ՝ իր առջեւ տպուած էջ չունէր:

Խորհրդանշանները կը փոխուին, բայց իրականութիւնը զոր խորհրդանշանները երկւան կը հանեն՝ նոյնը կը մնայ: Տէրունական աղօթքը միւսնոյն տէրունական աղօթքն է, եթէ մէկը ըսէ Հայր Մեր, կամ Pater Noster, կամ Unser Pater: Աստուածաշունչը դարձեալ նոյն Աստուածաշունչն է, անոր ո՞ր հրատարակութիւնն ալ որ կարգանք: Որովհետեւ Աստուածաշունչը կազմուած և տպուած գիրքը չէ: Անիկա միայն միջոցն է որով նուիրական հեղինակներուն սրտին մէջ գտնուած հաւատքի, յոյսի և սիրոյ զգացումները, արդարութեամբ գործելու, գթութիւնը սիրելու և խոնարհարար Աստուծոյ հետ ընթանալու փափաքը մեր սրտերուն մէջ կը փոխադրուի:

Անտեսանելի աշխարհի տեսական աշխարհն է: Նիւթականը միշտ, եղծուելու, քայքայելու և մոռնուելու ենթակա է: Աննիւթականը կ'ապրի: Հիւանդութիւնը չի կրնար վարակել զայն, փութութիւնը չի կրնար քայքայել, մահը չի կրնար փճացնել: Այս բոլոր կ'ուզէ Եսայի՝ Երկնային Ձայնին և Մարգարէին միջեւ տեղի ունեցած իր պրումաթիք խօսակցութեան մէջ:

Ձայնը. — Աղաղակէ՛:

Մարգարէն. — Ի՞նչ աղաղակեմ, ամէն մարմին խոտ է, և մարդուն բոլոր փառքը դաշտին ծաղիկին պէս: Խոտը չորցաւ, ծաղիկը թառամեցաւ, որովհետեւ Աստուծոյ չունչը փչեց անոր վրայ, արդարեւ ժողովուրդը խոտ է:

Ձայնը. — Ծշմարիտ է, խոտը չորցաւ, ծաղիկը թառամեցաւ, բայց մեր Աստուծոյ խօսքը յաւիտեան պիտի մնայ:

Նիւթականը կը փոխ, աննիւթականը որուն խորհրդանշանը և գործիքն է նիւթականը, չի փոխ: Չի մեռնիր, չի կրնար մեռնիլ: Յունաստանի տաճարները և արձանները աւերակ դարձած են, բայց այն գեղեցկութիւնը զոր աշխարհի տունն անոնք, աշխարհը երբէք կորսնցուցած չէ և երբէք չպիտի կորսնցնէ: Հռոմի պալատները, ճանապարհները, ջրմուղները աւերակ դարձած են. բայց աշխարհ տակաւին կը պահէ օրէնքի և կարգապահութեան

զգացուժը զոր Հում տուա աշխարհի: Տա-
ռական իմաստով գրեթէ ճշմարիտ է որ
Երուսաղէմի հին տաճարէն քար քարի վրայ
չէ մնացած, և իր չքեղ թէև քիչ մը բար-
բարոսական՝ արարողութիւններուն նմանը
չկայ ու է այժմեան պաշտամունքի մէջ:
բայց արդարութեան և սիրոյ Ատուծոյն
նուիրուած յարգանքը, իր նուիրական
ստիմուսընթացիւն և զոհաբերական մա-
տուցումներուն մէջ՝ արտայայտութեան
ուրիշ ձևերով կ'արտայայտուի Հրեայէն և
Հեթանոսէն, Սինսկիին, Մայր Եկեղեցի-
ին և Ժողովարանին մէջ:

Նիւթնկանը կը մեռնի, աննիւթականը
անմահ է: Անտեսանելի կապերով իրարու
կապուած անտեսանելի անհատականութիւն-
ներու աշխարհի մը մէջ կ'ստորինք: Որով-
հետև իրանիսին մէջ վերադառնալով չէ որ կը
տեսնենք, այլ մեր մարմինները: Ի՞նչ բան
կը կազմէ ըմբիշը, ոսկորը, նեւրոնը, քի-
զը, մկանը, ու: Եթէ ոսկորը, նեւրոնը, մկան-
ը, ջիղ ունեցողը, ծոյլ, տիմար, ան-
շարժ վատ մըն է, ըմբիշ մըն է: Դպրոցին
մէջ ամէնէն բարձր ուսումններ ընողներէն
մէկը կաղ մարդ մըն էր: Ոսկորը, նեւրո-
նը, և մկանը զործածող, կորովի, աշխոյժ,
քաջ ոգին է որ կը շինէ ըմբիշը: Եւ ոգւոյն
այս յատկութիւնները անտեսանելի են:
Չանոք կ'ընելու չափ փսփուկ նմարներ
չկան, ոչ մէկ մանրադիտակ տեսանելի
կրնայ ընել զանոնք, և ոչ մէկ չափ կրնայ
չնոյնել զանոնք:

Անգլ. Թարգ.

or. ՎԱՐԻԱՆՈՅՑ ԱԼԻԲՍԱՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ՊԱՏՄԱ - ԲԱՆՍՍԻՐԱԿԱՆ

—) օ(—

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵՑԻ (*)

Յոյները կ'մեղադրէին Հայերը՝ Աւետու-
մը Մարտ 25 ին և Ծնունդը Դեկտ. 25 ին
չկատարելուն համար: Սինեցի հրաւէր կը
կարդայ Անտիոքայ եպ. ին, սբաւեպի ցոյց
ուայ թէ ո՞ր գրքին մէջ գրուած է այդ
տօներուն համար վերոյիշեալ օրերուն սա-
մանուած լլալը, ու եթէ տօնոք Արու-

մոնի (1) սահմանաճներն են, կ'ըսէ, չենք
ընդունիր, որովհետև մեքն ձեռ գիրքերէն
գիտենք թէ Արտեմոն 7 ամիս միայն աշա-
կերտեցաւ Յովհաննու, և յետոյ բաժնուելով
անկէ՝ անոր հակառակ կանոններ սահմա-
նեց:

Մեզի համար ընդունելի չեն նաև, կ'ը-
սէ, Յորնաղի (2) և Մարկիանոսի սահմա-
նած կանոնները: այլ աւելի պէտք է ձիւս
ու վաւերական համարել ինչ որ սահմանած
է Յակոբոս Տեսուն եղբայր՝ իբրեւ կարգա-
դիր եկեղեցական կանոններու և ընթեր-
ցուածոց, քսաորում տալիս է Տիբեթա (3)
ամսուն 23 ի կը կատարէր Ծնունդը որ է
Յունվար 6:

(1) Արտեմոն Յունական աղբիւրներէ
անուած անուն մըն է: բայց այդ անու-
նով ծանօթ անձնաւորութիւն մը չկայ որ
յայտնի հակառակորդ եղած լլլայ Յովհ.
տալիսիին: վասնզի յաւանդութենէ ծա-
նօթ հակառակորդներու անուններուն մէջ
Արտեմոնի անունը չյիշուիր: հաւանական է
որ Գ. զարու սկիզբն տալիս Արտեմոն
հերձուածողին անունին հետ չիմիտուած բան
մ'լլայ: Թէ այս Արտեմոնը Յովհաննու
աշակերտը չէ, կ'վկայէ նաև Սինեցի իր
ընդդէմ՝ Երկարեակայ Հակաճառութեան
մէջ էջ (147):

Սա պէտք է գիտնալ թէ «ի ձեռ գրոց
գիտենք» բացատրութիւնը նշանակութեան
արժանի է, վասնզի եթէ պատմական գրոց
մ'էր կամ ախտ մը, Սինեցին իր ընթեր-
ցումներէն ստոված է զայն անշուշտ:

(2) Յորնաղ եպ. Երուսաղէմի՝ նկարա-
զիրէ և նոյն իսկ ճշգրիտ զաւանդութենէ
զուրկ յեղեղուկ մարդ մ'էր: Ի սկզբան
Դիոսկորոսի ջերմ պաշտարան ըլլալով՝ յետոյ
կայսերական ճշման մը տակ Բաղիդոնի
ժողովն ընդունեց ստորին եղանակով մը:

Գալով Մարկիանոսի՝ որուն համար
կ'ըսէ Սինեցի թէ Անտիոքացի Պետրոսը
(Թափիչ կամ կնափետի) իր ստակներով
սղաննել տուած լլլայ, այդ պարագան զը-
րոյց մ'լլալ կ'թուի: ստույգ է որ Չենոնի
ստաջին տարիներուն աթոռընկեց եղաւ
Պետրոս, բայց կոյսերական պաշտպանու-
թեանը արժանացաւ վերստին: Սովորաբար
իրեն կ'ընծայուի Խաչեցաբի յուսելուածն
ի Սրբապաշտութիւն զոր Անտառաւ կայսրը
նուիրագործեց և ընդհանրացուց ամէն կողմ:

(3) Տիբեթա 10 րդ ամիսն է Հրէից,
որուն 25 րդ կ'համապատասխանէր՝ Հով-
մէական տոմարի համեմատ՝ Յունուարի
6 ին: (Տես Անանիա Շիրակացի, Մնացորդ
բանից էջ 13 ի ճառին Յայնուքիան):

Աստուծոյ զատ կը խօսի նաեւ այն տեսակ խնդիրներու վրայ՝ որոնք վաւերականութեանը մասին ո՛չ մէկ ազդեցոյց կորելի չէ զանեւ։ Այսպէս, զոր օրինակ, Քրիստոսի ծննդեան և զարթոյց պարագաներու վրայ խօսելով՝ ուր բաներու ակնհայտ և համարի Յովորտս տեսեալը՝ որ իբր թէ Մարիամի Յովսէփի հետ նշանուած ատենը անոնց մօտ կը գտնուէր և Քրիստոսի ծննդեան միջոցին ալ կը պատահէր մօտին մէջ։

Դարձեալ այնպէս մը կը համարի որ իբր թէ Յակորտս առաքելը Յովսէփի հետ աշխարհագրի մօտ, անոր հետ Յովսէփի փախած, յետոյ վերադարձած, և շարունակ անոր հետ պտտած ըլլայ որչափ ատեն որ Քրիստոս յայրեջաւ աշխարհի վրայ։ Ուստիս կ'ըսէ, պակէց աւելի արժանաւաստ վկայ ո՞վ կրնայ ըլլալ Քրիստոսի ծննդեան, մկրտութեան և Անոր կեանքին մնայեալ պարագաներուն մասին։

Արդ՝ բոլոր այս պարագաները զորս կը յիշատակէ Սիւնեցի՝ իբրեւ ասոյց իրողութիւն կարելի չէ բնու պատմականապէս հաստատել։ Կամ պէտք է ըսել թէ բերեց բերան տարածուած աւանդութիւններէ հաւաքելով և մէջ բերած է զանոնք, և կամ ունեցած է իր անջնա անպակի աւել տարանները՝ որոնց մէջ ուրեք ուշիք կը հանդիպին Յակորտի վերադարձած նմա նօրինակ պարագաներու։

Այսպէս այժմու մեր ձեռքը գտնուած անվաւեր աւետարանը կը պատմէ թէ «Մարիամ տեսնելով զՅովորտ բօրր մահուանէն վերջը իր հօրը տանը մէջ վշտահար և մեկուսացեալ, սկսաւ խնամել զնա, ուստի և կոչուեցաւ մայր Յակորտ» (Les Évangiles apocryphes էջ 23)։

Դարձեալ «Ես՝ Յակոր» որդի Յովսէփայ՝ զրեցի այն ամէն բաները որոնց ակնհայտես եղայ, ի ժամանակս ծննդեան Մարիամու և Փրկչին (նոյն էջ 180)։

Ենթադրելով որ Սիւնեցի այդ պարագաները գրած ըլլայ՝ աչքի ռաջն ունենալով անվաւեր աւետարանի վերոյիշեալ կտորները, չկրնար բոլորովին ընդարձակալ, բայց ուրիշ տեսութեամբ մը, մասամբ կարելի է արդարացնել Սիւնեցին՝ որ

կրնար հաւատարմօքնել այդ կեղակարծ գրողներուն, մանաւանդ տեսնելով որ Սիւնեցիին հին Հայերն ալ, ինչպէս Որդիին, Եպիփան, Դրեգոր Նիւսայի, Ս. Յուստինոս, Ս. Կիլիմէս Ալեքսանդրացի նոյն բանն ըրած է ին արդէն, այս կամ այն անվաւեր աւետարաններէ օգտուելով։

Աւելի յատա՛ իրիպով կը հանդիպինք մի փոքրիկ պատմական սխալի։ Յուլիոս Աղիկառնացի (1) վրայ խօսելով, անշուշտ չափազանց միամտութեամբ կամ յայտնի տղիտութեամբ աւել անունով կը մեջարեղնա, որուն գործերը նշանակութիւն մը չգտան Հայոց մօտ և մանաւանդ որ նա աւելի իբրեւ պատմիչ կը յիշատակուի թումա Արծրունիին մօտ, քան իբրեւ վարդապետ Սիւնեցոյ (Տես Պատմ. Տանն Արծրունեայ, էջ 79)։

Յուլիոս Աղիկառնացիին անգնելն հետ կը յիշատակէ նախաձեռնողին և Արեւիկանու և Տիմոթէոս (2) ունեն անձեցի ալ որոնց համար կ'ըսէ թէ Յարմարէ անդիւռեցան։

(1) Յուլիոս կամ Յուլիանոս Աղիկառնացի մին էր այն եպիսկոպոսն որոնք Յուստինոս Ա. ի ժամանակ Յովսէփոս ազգաբանոցին։ Բնի մոթիոնց ճանապարհաւորութիւնը՝ կ'պատկանէր Կոստանց Կերեւմովի մը ըլլալու։ Փոքր պատգլայքի առ Զաքարիա Կաթողիկոս գրած նամակին մէջ՝ որուն համառօտ բովանդակութիւնը ըրած է վարդան պատմիչ (Տես Վենետիկ արխ., էջ 85) ի բր մէջ Կանաղիկոսի ժողովի Կոմարման առջիկ Մարգին անունով անձ մը ծարգմանով ըլլալ Աղիկառնացիին գիրքերը։ Սակայն շատ հիմնաւոր չերեւիր Փոքր տեղեկութիւնը եթէ մանաւանդ ծարգմանիչը կարծուած է մէջ այն Մարգին եղած ըլլալ որ Կոմարման Մայրապետնցիին աշակերտած ու յետոյ իբրեւ աղանդաւոր մը վտարուած էր իր վարդապետին Մանաղիկոսի մէջ զուժարուած ժողովին շատ տարիներ աւազ։

(2) Այս երեք անձերը Ալեքսանդրիոյ Եպիսկոպոսն, առաջինը կը յիշուի նաեւ Դադիկի առ Խոմանոս գրած Թուղթին մէջ Տիմոթէոսի հետ՝ որ հաւանաբար «հոգ» կոչուածը պէտք է ըլլայ։ Խալ Ստեփանոսի հետք որոշ բան չի չեն կրնար ըսել։ Երբեք Ստեփանոսը չորէս Կոստանց է այն որ միաբնակութիւնը պաշտպանեց և յետոյ հրամարեցաւ իր կարծիքներէն Քաղկեդոնականութեան յարելով։ (Պատմ. եկղ. Գր. Թարգմ. էջ 237)

Կը յիշատակէ նաեւ Կողանդէտ(1) տնուն տնձ մը՝ օրուն համար կ'ըսէ թէ «զմահն իւր անփոյթ արարեալն է ի տարեգումնս եւ ի խաղը տայր զնէ՛ն զանուն իւր » :

Առաք. Ատուածը «խաչեցար» ու կրկնու պարագային դարձով՝ կ'ըսէ թէ՛ մենք ձեր ըսածին համեմատ խաչեցարք անարգանքի համար չենք երգեր, և այս աւիթով կոչում կ'ընէ որ կարդան իրենց ժամանակակից Սոկրատը՝ յորում կը պատժուի թէ՛ Սուրբ Ատուածը խաչեցար ու կրկնէին հին առեւթը և թէ՛ Յովնան Ռակերթան կարդալով Որից կէտի գրեւածքը՝ իր ժամանակին ընդհանրացուց այդ սովորութիւնը :

(Շարունակելի) ԵՂԻՇԷ Վ. ԽԱՉԵՐԵԱՆ

ՀՈՅԵԳԱԼՈՒՍՏ

Ձախդ անաւոր ու սասկաւունց
Հովի ձայնին հիւս նրկանակ,
Լեցուց արեւն մեծամեծանց,
Վեհասունի եղիբին՝ անկ :

Հրանիւք շայեղ Բու բոցնդէն,
Լեզունքնու՝ իսկ հանգունակ,
Երկարեցան վար երկիմեհն,
Վեհասունի եղիբին՝ անկ :

Մեծաւորն մ'էր այս, ո՛վ Տեր,
Կամ բացառիկ մի պարագայ.
Ամենուն ալ չե՛ս խոստացեր,
Նայն Աստուածը չե՛ս Դու հիմա :

Թափե՛ կայծերդ վառ՝ երկիմեհն,
Գրքո՛ւ հոգի, Դո՛ւն անաւան :
Մեւած՝ մարած գեհ կիրքեհն
Վրայ սրբիս իմ անայտկան :

Թշու բալառի՛ն՝ անի՛ւն դառնան
Քոյր մ'եղբերս իմ մանաբեր.
Հոգիս քլայ Քեզ Սրբաւան,
Կեանքս՝ ուղակեզ Քեզ ի նրէր :
ԼՈՒՍՆԹԱՎ

(1) Արեւելից իշտատեան «Կողանդէտ» պէտք ըլլայ Անտիոքայ պատրիարք «Կողանդէտ» որ ծարանի իշտատեան Չենոն կայսեր Թագ կապով Լեւոնդէտի (27 թուիկ 481) կուսակից մը եղած էր, և հաւանաբար Բագրիւկոսեան մէր : Չենոն յաջորդեց Թագաւորութեան նախնի Անտիոքի մէջ՝ ուրիշ շատ եպիսկոպոսներ կողմնորոշեցին ալ պաշտօնընկէց ըլլաւ : Յետոյ առաք. յիշեցնեցաւ զանոնք Պետրոսի քր սկզբան իր ծայրակից գաղափարներուն համար (ի վաշտապնոց իւր) միտքնա-կանգնած) հետեւեցան կը իր պաշտօնէն :

Թէ՛ կայսրն ուրիշ կողմնորոշեց հետ զորք մ'ունեցած չկրնար ըլլալ, ոչ ոյ յայտնի է հաւանական է որ իր անուանի զազատեալուն նմանեանէն հետ-բուած ըլլայ զորոյց մը եպիս Բագրիւկոսեան ՏԵՐԻՄԻՆ Զնորիւն :

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ
ՀԱՅ-ՀՌՈՄԷԱԿԱՆԱՑ Կ. ՊԱՏՐԻԱՐԻՒՆ

Համերայիս եղբայրակցութեան գեղեցիկ ցոյց մ'եղաւ Ս. Պատրիարք Հօր Գլ. օր-ուան աշխույթիւնն առ Տ. Պողոս Ս. Թէրզեան, Կ. Պատրիարք Հայ-հռոմէակա-նայ : Դուրեան Սրբազանի կ'ընկերանային Դիմաքսեան և Տէրունեան Սրբազանները, Պատր. Փոխանորդ Տ. Դեւոյ Մ. Վ., և Բաղաք. Ժողովէն Տեարք՝ Տօքզ. Թար-գմեան և Տօքզ. Տեղաւարեան : Սրտազին ողջապնդմանիւ և ներկայացումներէ ետք, Դուրեան Սրբազան շնորհաւորեց Թէրզեան Սրբազանը՝ իր բնորութեան աւթիւն, չեղ-տեց անոր արի ընթացքը՝ մասնաւորապէս կիրիկեան դէպքերու մէջ, որով ոչ միայն ժողովրդին ցաւերը կ'սփոփէր զանոնք մը-խիթարելով և ապրուստի միջոցները խոր-հելով, այլեւ՝ որ կարեւորն է՝ աւելի մեծ գործ մը կ'սկսարած է, արդարեւ թեան զտուին շուրջը միտցնելով անգլոյն Հօգի-ւոր Պետերը : Ս. Պատրիարք Հայրն յոյս յայտնեց թէ Թէրզեան Ս. ի Պատրիարքու-թեան շրջանն ալ սիրալիւ եղբայրակցու-թեան և սղագոյին համերայութեան գա-ղափարին պիտի նուիրուի, որուն համար ամէն երաշխատութիւն կ'ընծայէ իր անցեալ գործունէութիւնը :


Թէրզեան Սրբազան շնորհապալութիւն յայտնեց այս անկեղծ յայտնաբերութեանց, նաեւ այն համակրութեան համար զոր հայ եկեղեցականութիւնն և հայ ժողովուրդը ջրց կուտան իրեն նկատմամբ : Երկու Դուր-եան Սրբազանի արդիւնաւոր ջանքերն և զիմունքները, Ատանայի ժողովրդեան նի-թնման եւ բարոյամբան միտքնորութեան համար, որով մինչեւ իսկ մէկ քննի մա-ուան զատուապարտեալներու կեանքեր շնոր-հուեցան, եւ ոմանք ալ աքորել փրկուե-ցան : Ս. Պատրիարքը զիմել ստանալ թէ հիմակ աւելի՛ հեղինակաւոր կրեալով պիտի կրնայ աշխատել կիրիկիոյ կարօտութեանց մեղմացման համար : Թէրզեան Ս. եւս Ս. Պատրիարքէն խնդրեց աջակից ըլլալ իրեն՝

այս նպատակով և զիմում ընել կառավարութեան շօտ, որպէսզի չմեար չհասած զրկուին մասնաւորապէս ա՛յն նպատակներն որ յատկացուած են կարօտելոյ, Օսմ. Խորհրդարանին որոշեամբ:

Խօսակցութիւնն յետոյ դարձաւ Կիլիկիոյ ժողովրդեան վիճակին շուրջ, և Ս. Պատրիարքը տեղեկութիւններ տուաւ որբանոցներուն տրուելիք ուղղութեան և կազմակերպութեան վրայ, որոնց համախոս պանուեցաւ Թէրզեան Սրբազան:

Ս. Պատրիարքին ուղեկիցներն ևս իրենց շնորհաւորութիւններն յայտնեցին, և մասնաւորապէս Տօրդ. Թորգոմեան էֆ. շեչտեց համերաշխութեան պէտքը, և կրթութեան եղանակի տարբերութիւններէն յառաջ եկած նկատելով ցրտութիւնը ազգին երկու հատուածներուն միջեւ, խօսեցաւ կրթական այն տեսակ ծրագրի մը վրայ, որ ազգին մէջ Հայ-հռոմէականք և Հայ-բողոքականք ևս միեւնոյն ոգիով կրթուին, և աւելի՛ սերտ և սիրալիր յարաբերութեան մէջ գտնուին: Փափաք յայտնուեցաւ նաեւ որ, ինչպէս եղեր է Ստանայի մէջ, Պոլսոյ մէջ ալ Հոգեւոր Պետերն երբեմն միանալով և խորհրդակցելով գործեն, աւելի՛ արդիւնաւորելու համար իրենց դիմումները: Թէրզեան Ս. պատասխանեց թէ համերաշխութեամբ զործելու սկզբունքն ինք փորձով ցոյց տուած է, և իբրեւ Պատրիարք բնականաբար աւելին պիտի ընէ:

Սիրալիր ընդունելութենէ և պատուասիրութենէ հոգր, Ս. Պատրիարքն և իր ուղեկիցք մեկնեցան համակրական ցոյցներու մէջ:



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԷ՛, անյեալ ուրբաթի նիստին մէջ յաջողեցաւ երեք խնդիր վեցնել օրակարգէն: Ա. — Ընդունեց թէքէեան էֆ. ի բանաձեւը՝ եկեղեցիներու մէջ միթիւնի զուամբելու խնդրոյն առթիւ՝ և որոշեց, առ ի տեղեկութիւն հաղորդուած Հայրապետական կոնդակը վերադարձնել Ազգ. Վարչութեան ի գործադրութիւն: Եւ Խառն ժողովն իր Դժ. ի նիստին մէջ որոշեց եկեղեցիներն իսպառ փակել բոլոր

հաւարոյթներու դէմ, ըլլայ ազգային, ըլլայ կուսակալական, նկատելով որ եկեղեցիներն հիմնուած են ժողովուրդներու հոգեւոր պաշտամունքներուն և կրօնական արարողութեան իրաւարման համար: Բ. — Վարչութեան առաջարկին համաձայն մերժեց Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին հրաժարականը, և միաձայնութեամբ որոշեց Ն. Բ. Աբրահամութիւնն հրաւիրել իր Աթոռ. միեւնոյն տունն ժողովն իր շնորհակալութիւնը պիտի յայտնէ Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին՝ իր անձնուէր Զանքերուն համար: Ըստ այսմ Խառն Ժողովը Դժ. օր որոշեց Ազգ. ժողովոյ որոշումը տեղեկագրել Ն. Բ. Սրբազնութեան միեւնոյն տունն ծանուցանելով թէ աթոռապետական առաջնածքներու խնդրոյն կարգադրութեան համար պէտք եղած Զանքերն առկա վերջ ալ պիտի շարունակուին: Գ. — Անգամ մը ևս որոշեց հաստատ մնալ 71ի մեծամասնութեան պիղքունքին վրայ: «անմամայնակ նկատելով Սահմանադրութեան վերաբնութիւնն առաջ բերող ու է որոշուած»:

ԻԶՄԻՐԻ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԷ. — Իզմիրի ազգայինները, զիտակից և լուրջ ընթացք մը ունեցան, իրենց առաջնորդ ընտրելով Գեոր. Տ. Մատթէոս Վ. Ինճէեանը, որ իր օրացած խնամեալ դատօրհանութեան, օրէնսդրական հմտութեան և լուրջ նկարագրին կը միացնէ Հայ Եկեղեցւոյ և ժողովրդեան լաւ իմացուած շահերու պաշտպանութեան համար քիչերու կողմէ ցոյց արուած կռանդ մը և գործունէութիւն մը, զոր ի վեր հանեց թէ՛ Պոլսոյ և թէ Աշրիանուպոլսոյ մէջ: Կը շնորհաւորենք նոյն քաղաքի ազգայինները, և վստահ ենք թէ պիտի բոլորուին Ն. Սրբութեան շուրջը, զիւրացնելու համար առնոր աշխատութիւնները, Իզմիրի նման կարեւոր թեմի մը մէջ:

ՌՈՏՈՍՍԹՈՅԻ՝ առաջնորդութենէն՝ Պատր. Փոխանորդ Տ. Ղեւոնդ Մ. Վ. Դուբեանի հրաժարականը Խառն ժողովը Դժ. օր ընդունելով, նոր ընտրութիւն կատարելու հրահանգ տալ որոշեց զրկելով հետեւեալ եռանուն ցանկը. — Տ. Գէորգ Մ. Վ. Արսլանեան, Տ. Տիրայր Մ. Վ.

Մարգարեան եւ Տ. Արտուազդ Մ. Վ. Գալէնտէրեան:

ԱԴՐ. ՊՈԼՍՈՅ առաջն. ընտրելի նշանակեց Խառն Ժողովը՝ Տ. Տ. Արսէն Վեհունի, Վահան Յակոբեան եւ Յղնիկ Պապեան վրդ. ներք:

ՍՈՈՑՈՒԱԾ ԷԶԵՐ

ՍԻՄՈՆԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ (*)

Երիտասարդ ու երիտասարդուհի երբ ղէմառէ՞մ կ'ուզան վէպի մէջ, ընթերցողը՝ թէեւ չըլլայ մասնագէտ վիպական սրբեւորին, ստանց դժուարութեան կ'ենթադրէ թէ ի հանդէս բերուած են անոնք որպէս զի սիրեն զիրար: Այլ աւելի ճիշդ չէ՞ ըսել — երբ վէպը պատմութիւն է սպորուած կեանքի մը — թէ ի հանդէս բերուած են զի սիրած են զիրար, և իրենց սէրն և հետեւանքներն հանրութեան սիրտը գրաւելու մտաւորութեան առարկայ ըլլալու բնոյթն ունին: Ուրեմն մենք ալ պարբերութիւններու պէտք չենք տեսներ ըսելու համար թէ՝ Պետրոսի և Սուրբիկի արտերը նոյն իսկ առաջին հանդիպումէն կապուեցան իրարու: Չենք ուզեր երկար զեզեբիլ անոնց սիրոյ շուրջը, զի սիրահարակաջն հովուերգութիւն երգել չէ մեր նորաստեղծ աղ արագաատն փոխանցումով կ'ըսենք թէ այդ զիշերը, և յետոյ շատ զիշերներ՝ Պետրոս առաւպետ աւելցուց: Ծանկութեան հուրը բոցակիծ կ'ընթանար երակներուն մէջ: Սուրբիկի մարմինն, առողջ, պարարուն, զրաւումի տենչը բոքոքած էր յինքեան. ամոր հասակազուրկ եղուն իրանն ազուական զրկալէցութեան տենչով կը տաշորէր այդ քսան և եօթը տարեկան երիտասարդը որ քսան և եօթը տարեկան, բայց անձնատուր չէր եղած մարմնական վայելումի:

Կեանքի պարտպանները հարկադրւած էին զնա յարգել Գուրգէ հարկ եղած չափէն

աւելի յարգել ստաքինութիւններու էն օգտակարը բայց միանգամայն է՛ն անհամակրելին, ժուժկալութիւնը: Այլ ժուժկալելու առաքինութիւնը, էր մոխիրն որ այդ առոյգ մարմինն մէջ, իբր ի վստարանի, պայծառ ու անշէջ կը պահէր ցանկութեան կրակը. միայն թէ վատարանը, շինուած դիւրավառ նիւթէ, միշտ ենթակայ էր բռնկելու վտանգին: Սուրբիկ, հեշտաբոյր, շնորհակաթ, եղաւ շունչն որ փչեց մոխիրն վրայ, զիբ ու տար ըրաւ գայն, հրահրեց պահեստի կրակը, ու բռնկեցուց վատարանը:

Մինչև այդ օրը Պետրոսի կեանքն էր հանդարտ, միապաշար: Աշխատանք ու հանգիստ իբր քնաբեր քափուր իմրեցուցած էին այդ կայտառ մարմինը. և ահա մարմինը կ'արթննար երկարատեւ քունէն: Կինը որուն կը ցանկար երիտասարդը, աղջիկ էր, զնա վայելելու համար ամուսնութիւնն հարկ էր. այդ համոզում եղաւ քնաթափի դէմ, որ սթափեց զինքը: Պետրոս ապրած էր օշն օշին, առանց շատ մտածելու թէ ի՞նչու կ'աշխատի, ի՞նչու կ'սպրի, և այժմ յանկարծ վրդովումի մէջ էր ու ինքնին կը հարցնէր թէ ի՞նչ եղած էր իր կեանքն ու ի՞նչ պիտի ըլլար: Հեղինակեան ծիծաղ մը սահեցաւ զէմքին վրայ, երբ ուզեց պատասխանել այս հարցումին. — Գիրնալ, ծիրանալ, մեռնիլ, կեանքի ուրիշ հորիզոն չէր կարող նշմարել:

Այս գաւառումալ մտածութիւններէն յոգնած, Պետրոս սփոփանք խնդրեց զեղամպիտ երազներէ ու երազեց Սուրբիկն իր գրկին մէջ, և օր մ'ալ սիրուն գաւկընէր իրենց բոլորտիքը. սիրոյ, երջանկութեան կեանք մը:

Ինչո՞ւ չվայելիլ այդ երջանկութիւնը. ինչո՞ւ չամուսնանալ Սուրբիկի հետ: Պատճառ: Պատճառ չկար:

Վաճառականներու միջավայրին մէջ մեծցած, Պետրոս ամուսնական խնդիրներու մասին ունէր այն անձնավատահութիւնն որ յատուկ է առեւտրական դասին պատկանողներուն և որ կը մօտենայ յաւակնութեան: Պետրոս Մարանկօզեան և ոչ իսկ ընդունակ էր ենթադրելու թէ՛

(*) Շաւուհակոբէրն 13րդ քիւնն:

կարելի ըլլար Սուրբիկին իրեն մերժել երբ զնա կհաւթեան ուղէր: Ժառանգած էր մօշն արիւնէն և քիչ շատ անոր դաւախարակից էր թէ՛ քաշեղաղղ պիտի հաւմարուի այն որուն ծնողք աղջիկն ինք ուզէ:

Կեանքի պատկերազմի մէջ յաւակնութիւնն երբեմն զօրութիւն է, զի հաւատաքի մաս կը կազմէ: Այդ հաւատքով զօրացած, Պետրոս ո՛չ տրամութեան անձնաւոր եղաւ, ո՛չ խորատուղունցու մեղաւ մաղձոտ երազներու մէջ, և ըր որպէս ամուսնանալ Սուրբիկի հետ: Իր կամքը պիտի գործադրուէր, այլ մասին վստահ էր, և վստահ ըլլալու իրաւունք ալ ունէր, զէթ Սուրբիկի նկատմամբ: Հանգիպումներն աւելի յաճախ եղած էին, և սկներու էր թէ Սուրբիկ հաճոյք կը զգար Պետրոսը տեսնելով:

Ո՛չ միայն հաճոյք այլ նաեւ յոյս էր Պետրոս: Սուրբիկ կը հանդիպէր նմա՝ ճիշտ այն պահուն երբ կը լսէր յուսահատութեան առաջին ազդը: Կնոջ կեանքի կէսն արդէն անցած էր. կը վերջացնէր քսան և մէկը: Մինչև այն օրն ուր զեւ տասնեակով կը համրէ իր տարիները, ուրախ ու զուարթ կ'ապրի աղջիկը, մոտաւորապէս ամուսնութեան մը երազովն երանեալ: Այլ մի օր զէմքի նրբածիլ կնճիւ մը կը գուժէ կեանքի ամառնամուտի մերձեկալը: Քսանամկնի է աղջիկը. ոչունը մերձ է. Օրն է սուգի օր, երբ աղջիկ մը կը մտնէ իր քսաներորդ տարին, առանց նշմարելու հորիզոնին վրայ ամուսնի մը սիւնէթը:

Եւ Սուրբիկ քսան և մէկ տարեկան էր: Փոքրիկ եղած ատենը մայրը կ'ըսէր պարծենալով:

— Աստուած չընէ, մինչև տասներկու զը չլմնցնէ պիտի չկարգեմ:

Տասներկու տարեկան յաջորդած էր տասնեակեցը, ուրիշ ատրիներ ալ իրարու ետեւէ հաւան, ու Սուրբիկ կը մնար ատանց ամուսնի. ա՛յ սկսած էր երկիւղով, սրտադողով գրեթէ հաւատալ չարազուշակ մարդաբնութեան մը, զոր ըրած էր մի երկտասնորդ գրազէտ որու համակրանքին ան-

տարբերութեամբ պատասխանած էր: Այդ գրազէտը նեղարտութեամբ յայտարարած էր թէ Պիլսի մէջ աղջիկ մը, անօժիտ աղջիկ մը, որչափ աւելի սիրուն, որչափ աւելի զեղեցիկ ըլլայ, այնքան աւելի շատ է «տունի մնալուն» հաւանականութիւնը: Կարծիքն արտաւայ թուած էր. այլ գրազէտն անուամբնելով իրենց ծանօթ ամուսնի աղջիկները, հաստատած էր իր կարծիքը. տեսնութեանէ այլևս յուսարեկ աղջիկներու գունդին մէջ պատկառելի մաս կը կազմէին անոնք որոնց համար սովորութիւն է ընել թէ «նախաինամութիւնն յատուկ խնամքով ստեղծած է»:

Ամբան կիրակի մը Մարանկոզեաններն ու Քույրմէնեանները ցերեկէ ճաշը միասին ըրին բացօթեայ վայր մը: Պատիկ-Մաղադի մթնայգ պուրակին մէջ, տուն դարձան իրիկնամուտին: Կ'անցնէին գրեթէ կանաչ տարերէ, ծառազարդ դաշտերէ, որք արեւի յետամնաց ճառագայթներէն թեթեւ իմն զեղնաթոյր, կը պատկերայնէին դարնան ու աշնան խառնուրդը: Հոս ու հոն կը լսուէր մզուրեալ թռչուններու դաղալիկը, այն միւսնայն դաղալիկին սր առաւօտուն այնքան ուրախ ու զուարթ կ'ընէ զմարդ և իրիկուններն այնքան մեղամաղձոտ:

Եւ իրիկունն էր կիսատաք: օդին մէջ սփռուած էր հեշտ մեղկութիւն: Պետրոս ու Սուրբիկ կը զնային թեւ ի թեւ, իրենց մտքին տաքութիւնը իրարու փոխանցելով, իրենց քաղցկինն ու դարձուր զգալով: Եթէ ըլլային միայնակ, կը փարէին իրարու, առանց բառ մը արտասանելու: Պետրոս այլևս կարող չէր զսպել սրտին թռիչք, և ավայն կը տկարանար, ինչպէս արի գինուորր ճակատամարտն սկսելու վայրկեանին, բայց չուտ գտաւ իր անձնախառնութիւնը, և հապճեպով ըսաւ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

(Նառուկակելի)

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀՄԱՅՆԱՆ ԿԷՆՑ. ԷՔՍԷՐՃՆԱՆ

ՏՆՅՈՒՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐԲԱՅՐ ԿԷՆՑ, ԿԷՋԻՐՈՒՄԱՆ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԷՆ ԹԵՂՄԱՆԵԱՆ

ՐԱԶՄԱՂԵՑ

Անասգիր ազգային, բանասիրական
գրական և գիթական, պատկերազարդ
վեճակական Հայերէն հրատարակած
այս Հանգիստարանը ամէն ամիս կը բերէ
մեզի Հայ մատենագրութեան և Հայ
այժմէութեան նուիրուած հմուտ յօդուած-
ներ և տեսութիւններ: Տարեկան բաժնե-
դին 10 ֆր. կամ 50 դր.: Հասցէ.—
Rédaction de la Revue «Bazmavep»,
St. Lazar, Venise (Italie)

ՀԱՆԳԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Վիեննական հայերէն հետալից հրա-
տարակութեան նուիրուած Հայ բանա-
սիրութեան, Հայ պատմութեան և Հայ
քննական ուսումնասիրութեան: Եւրոպայ
տարեշրջանին հոգ տարուած է մասնաւո-
րապէս ժողովրդային պահանջներու ադ
գոհացում տալու: Տարեկան բաժնեդին
15 ֆր., կամ 6 ռբ.: Մէկ թիւ 1. 50
ֆր.: Հասցէ՝ Rédaction de la Revue
«Handiss» Amsurya° VIENNE VII/2,
Mechitharistengasse 4:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐԲԵՐ

ՅԵՐԵՐ ՄԸ Ի ԿԻՒԼԻԿԻԱ. — Գրեց Տիկ.
Արեակունի Թեոդիկ. — Հեղինակուհին որ
այնքան ազնիւ գործ մը կատարեց, Կի-
ւիկեան արհաւիրքի վարին մէջ անձամբ
ստատարելու համար վերաշինութեան գործին՝
Ազգանուէր Հայունեաց վարժարանի կազ-
մակերպութեան հոգն ստանձնելով, այս
հատորին մէջ խտացուցած է իր ցուցակին
տարատարութիւնները, որը օրին զրի առ-
նուած՝ բանաստեղծական նկարուն զրչով
մը: Աւելի քան 200 էջերէ բաղկացած գե-
ղեցիկ հատոր մը, զարդարուած տեղւոյն
վրայ առնուած քաղմաթիւ լուսանկար
պատկերներով որ կը ներկայացնեն տեւր-
եալ վայրերու տեսարաններ և հերոսական
գէտեր: Յուզումով, արցունքով կարդաց-
ուելիք գիրք մը, որու ընթերցումը ճշմա-
րիտ վայելք մըն է միւսնոյն ասուն: Գին
7 ու կէս դր.: զուտներու համար 9 դր.:
Կեդրոնատեղի Տէր Ներսէսեան վաճառատուն
ԽՈՒՆԻ ԵՒ ԱՐՑՈՒՆԻ — Բանաստեղծ-
ական սիրուն հատոր մը նորընծայ բա-
նաստեղծէ մը՝ Արամ Կազանճեանէ, որ
—ինչպէս կը գրէ Տիար Գաղիկ Օգանեան
լաւաջարանական գրութեան մը մէջ—
ժամանակակից կարգ մը բանաստեղծնե-
րու նման սիրային թրթռումներ չէ որ
կը բերէ մեզի, այլ «հոն կայ ողբ, աղօթք,
Հայ կեանքին լացը, բողբոջ ու երգը»:
Ներդրամիտ քաջակերութեան արժանի
կը գտնենք նորընծայ բանաստեղծը,
որու առաջին քայլերը գողցող ու վա-
րանստ են անշուշտ:

Հաւորիկը տալագրուած է Մարգուան,
Ներսէ-Արարեան տալարանին մէջ, այն-
պիսի մաքրութեամբ մը որ պատիւ պիտի
բերէր Պոլսոյ ու է տալարանի մը իսկ:
Գին 4 դր.: Կեդրոնատեղի Եւրոպական
գրատուն: Սուլթան Համամ, Պագըրճը-
լար:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԷ

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

ՄԱՆՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐԵԶՄ-
ՀԱՐՑՈՒԹԻՒՆ. — Գրեց Յովհաննէս Գա-
ղանճեան: Իր ուշադրու պարունակու-
թեամբ և հոգեբանական վերլուծումնե-
րով արժանի ամէն գրադարաններու մէջ
գտնուելու Գին 6 դր.:

ՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ՄԵ-
ԾԱՏՈՒՆՆԵՐՈՒ 1400-1900. — Հմուտից
գործ Բ. Գ. Մամբեան Լ. Գին 10 դր.:

ՆՈՒՊՐ ՓԱՆԱ. — Ճրանագի գրողի
մը՝ Էմիլ Պէրթրանի «Նիւերն և տալաւո-
րութիւնները» Հայ մեծանուն քաղաքա-
գէտին վրայ Հայերէնի վերածած է ծա-
նօթ գրող մը, Մեսրոպ Լ. Գ. Նուպարեան,
անգամ նոյն գերդաստանի, որ ընտանե-
կան շահեկան մանրամասնութիւններով
և քաղաքական պարագաներով ալ ճոխա-
ցուցած է գործը, զարդարուած հայր և
որդի նուպար փաշաներու գեղատիպ
պատկերներով: Գին 5 դր.:

ԳԻՍԱԽՈՐԻ ԵՐԸ. — Ժողովրդային
պատմութիւն բոլոր գիտաւարներու: Գին
5 դր.:

ԿԱԻԷ ԱՐԶԱՆԵՆ. — Յ. Յանքիկեան.
Գրեց Արամ Անտոնեան: Գին 7 ու կէս
դր.:

ԱՌՉԵՌՆ ՅՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՌԱՐԱՆ.
ԱՇԽԱՐՀԻ, Մ. Նուպարեան Լ. Գին
(Մամուլ տակ): Բաժանորդագրութիւն
(կազմեալ) Պոլսոյ համար 2) դր.: Կա-
ւաւաց՝ 23 դր.: Արտասահման՝ 5 ու
կէս ֆր.:

